ՀԱՂՈՐԴՈՒՄ

ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021Թ. ԲՅՈՒՋԵԻ 9 ԱՄՍՎԱ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Եկամուտներ

Մասիս քաղաքային համայնքի 2021թ.վարչական բյուջեի եկամուտների տարեկան 754714,0 հազ. Դրամ առաջադրանքի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 552941.6 հազ. դրամ, կամ 9 ամսվա մուտքերի առաջադրանքը կատարվել է 73.3 %-ով, որից սեփական եկամուտների առաջադրանքը 322519.5 հազար դրամի դիմաց կատարվել է 228988.0 հազար դրամ կամ կատարվել է 71.0%-ով՝ :

1.Հարկային եկամուտներ

Հարկային եկամուտների գծով տարվա համար նախատեսված 184912.6 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 126075.3 հազ. դրամ, կամ մուտքերի առաջադրանքը կատարվել է 68.2%-ով, այդ թվում անշարժ գույքի հարկի առաջադրանքը կատարվել է 107.7%-ով, գույքահարկ փոխադրամիջոցներից՝ 51.2%-ով, տեղական տուրքերը՝ 66.8%-ով, պետական տուրքերը՝ 111.7 %-ով:

Տեղական տուրքերի առաջադրանքը տարվա համար նախատեսված 11277.6 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 7529.6 հազ. Դրամ

2.Պաշտոնական դրամաշնորհներ

Պետական բյուջեից տրամադրվող դոտացիայի և ընթացիկ սուբվենցիայի փաստացի մուտքերը կազմել են 320121.7 հազ. դրամ:

3.Այլ եկամուտներ

Այլ եկամուտների առաջադրանքը կատարվել է 74.6%-ով, կամ նախատեսված 143081.2 հազ. դրամի դիմաց, փաստացի մուտքերը կազմել են 106744.6 հազ. դրամ, նույն թվում՝ հողերի վարձակալությունից եկամուտները կատարվել են 82.9%-ով, այլ գույքի վարձակալությունից եկամուտները՝ 76.2%-ով:

Պատվիրակված լիազորությունների համար պետական բյուջեից մուտքերը կազմել է 3831.9 հազ. դրամ, կամ կատարվել է 70%-ով:

4. Տեղական վճարների մասով բյուջեում նախատեսված 114562.3 հազ. դրամի դիմաց գանձումները կազմել է 77226.1 հազ. դրամ կամ կատարվել է 67.4 %, որից աղբահանության վճարների մասով կատարվել է 79.6%-ով: Համայնքի պատվերով՝ մանկապարտեզների մատուցված ծառայությունների դիմաց ծնողական վճարների մասով կատարվել է 52.5 %-ով,

երաժշտական և գեղարվեստի դպրոցների կողմից մատուցված ծառայությունների դիմաց ծնողական վճարների մասով՝ 71.5 %-ով, ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարները՝ նախատեսված 3000,0 հազար դրամի դիմաց գանձվել է 9590.7 հազար դրամ:

Ծախսեր

2021 թ. համայնքի բյուջեի վարչական մասի 9 ամսվա ծախսերը կատարվել է 68.1 %-ով՝ 754714.0 հազ. դրամ տարեկան առաջադրանքից կատարվել է 514323.6 հազ. դրամ, որից՝ վարչական բյուջեի ծախսերը ըստ ծրագրերի կատարվել են՝

Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով նախատեսված ծախսերը տարեկան պլանի նկատմամբ կատարվել է 67.1 %-ով:

Գյուղատնտեսություն դասակարգմամբ նախատեսված ծախսերը կատարվել է 72.0 %-ով:

Ճանապարհային տրանսպորտի ոլորտում նախատեսված ծախսերը տարեկան պլանի նկատմամբ կատարվել է 59.6 %-ով:

Շրջակա միջավայրի պաշտպանության համար նախատեսված ծախսերը կատարվել է 71.6 %-ով:

Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն դասակարգմամբ նախատեսված ծախսերը կատարվել է 76.1 %-ով:

Հանգիստ, մշակույթ և կրոն դասակարգումով նախատեսված ծախսերը կատարվել է 49.0 %-ով:

Կրթության ոլորտի համար բյուջեով նախատեսված ծախսերը կատարվել է 71.1 %-ով:

Սոցիալական պաշտպանության ոլորտում նախատեսված ծախսերը կատարվել է 53.1 %-ով:

Մասիս քաղաքային համայնքի 2021թ. ֆոնդային բյուջեի 9 ամսվա մուտքերը տարեկան նախատեսված 1 386 154.9 հազ. դրամի դիմաց կատարվել է 731 530.3 հազ. դրամ, որից տարեսկզբի մնացորդը՝ կազմել է 518470,0 հազ. դրամ, գույքի և հողի իրացումից մուտքերը՝ նախատեսված 403 621,2 հազ. դրամի դիմաց՝ կազմել է 209 832.5 հազ. Դրամ, օտարերկրյա կազմակերպություններից ստացվել է դրամաշնորհ՝ 3227.8 հազար դրամ:

2021 թ. Ֆոնդային բյուջեի 9 ամսվա փաստացի ծախսերը ընդհանուր կազմել է 87729.6 հազ. դրամ, որից հատկացվել է՝ համայնքապետարանի աշխատակազմի կարիքների համար աթոռների, տեսահսկման համակարգի և համակարգչային ցանցի սպասարկման համար սերվերի ձեռք բերմանը՝ 5688.5 հազար դրամ, քաղաքապետարանի վարչական շենքի

հիմնանորոգման աշխատանքների մասնակի վճարմանը՝ 35837.2 հազար դրամ, փողոցային երթևեկության կարգավորման մպատակով լուսակիրի ձեռք բերմանը՝ 3920,0 հազար դրամ, քաղաքի փողոցների խճապատման- հարթեցման աշխատանքներին՝ 6050,0 հազար դրամ, ճանապարհների գծանշման աշխատանքներին՝ 983.8 հազր դրամ, բակերի բարեկարգման նախագծա-նախահաշվային աշխատանքների ձեռքբերմանը՝ 920,0 հազար դրամ, բակերի բարեկարգման աշխատանքներին՝ 4397.6 հազար դրամ, խաղահրապարակների հիմնանորոգմանը՝ 10439.5 հազար դրամ, հանգստի, սպորտի ծառայություններով ձեռք է բերվել նստարաններ 2580.0 հազար դրամ, Արցախյան պատերազմում զոհվածների հուշակոթողի կառուցման աշխատանքների համար մասնակի վճարմանը 8655.3 ազար դրամ, համայնքային ենթակայության նախադպրոցական հիմնարկների կարիքների համար սառնարանների ձեռք բերմանը՝ 876,0 հազար դրամ, նախագծահետազոտական աշխատանքների համար՝314.3 հազար դրամ, Մասիսի գեղարվեստի դպրոց ՀՈԱԿ-ի կարիքների համար դյուրակիր համակարգչի ձեռք բերմանը՝ 295,0 հազար դրամ, Ա. Բաբաջանյանի անվան երաժշտական դպրոց ՀՈԱԿ-ի հիմնանորոգմանը՝ 6085,9 հազար դրամ, արտադպրոցական հիմնարկների կարիքների համար վարչական սարքավորումների /պրինտեր, կարի մեքենա/ ձեռք բերմանը՝ 548,0 հազար դրամ:

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Դ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Ն. ՍԱՀԱԿՅԱՆ